

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 1-ին, երեքշաբթի.—Այսօր իր պաշտոնատեղին մեկնեց Ռումինիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը, որը շուրջ քսան օր ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

*
* *

Նոյեմբերի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր, կեսօրվա ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին է այցելում Դամասկոսի հայոց թեմից հանրային գործիչ Վարուժան Սալաթյանը:

Նույն օրը Վեհափառ Հայրապետին է այցելում Եգիպտոսի հայոց թեմական խորհրդի անդամ Վահան Գավուկճյանը իր հարգելի տիկնոջ հետ:

*
* *

Նոյեմբերի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նոյեմբերի 8-ին, երեքշաբթի.—Այսօր, կեսօրվա ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետին են այցելում լիբանանահայ հասարակական մի շարք գործիչներ, այդ թվում պրոֆ. Բարունակ Թովմասյանը, Հարությունն Մաղեյանը և Ավետիս Դեմիրճյանը:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Նոյեմբերի 9-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով իր պաշտոնատեղին է մեկնում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

*
* *

Նոյեմբերի 13-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ.

Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն փորձէին զնա և ասէին. եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել զկին իւր, ըստ ամենայն վնասու... Արդ, զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ» (Մատթ. ԺԹ 2—6) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաբաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Ավետարանի հասկացողությամբ հայրենասիրական զգացումների մասին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 57-րդ տարեդարձի առթիվ:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում կառավարական մաղթանք Սովետական Հայաստանի 57-րդ տարեդարձի առիթով:

* * *

Նոյեմբերի 28-ին, երկուշաբթի.—Այսօր, երեկոյան, Երևանում, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի շենքում, տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 57-րդ տարեդարձին:

Հանդիսավոր նիստին ներկա է լինում նաև Հայոց Հայրապետը:

Այս առիթով Նորին Սրբությանը ընկերակցում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը և, որպես գավազանակիր, տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

* * *

Նոյեմբերի 29-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 57-րդ տարեդարձի առիթով, ճեմարանի ավագ վերակացու տ. Արտակ քահանայի ղեկավարությամբ, մեկօրյա պտույտի է մեկնում Սարդարապատ և Մեծամոր:

* * *

Նոյեմբերի 30-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ՝ Վեհափառ Հայրապետի ներկայությամբ: Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը զեկուցում է կարդում «Վերք Հայաստանի» վեպի և նրա հեղինակ Խաչատուր Աբովյանի կյանքի ու գործունեության մասին: